

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան

«27» 01 2015 թ.

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն-ը, ի դեմս կենտրոնի տնօրեն Բարդուխ Գաբրիելյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Հայաստանի ցամաքային և ջրային էկոհամակարգերի ուսումնասիրություն» ծրագրի «Հայաստանի կենդանական աշխարհի ուսումնասիրություն՝ բազմազանությունը, գնահատումը, պատմական զարգացումը, անթրոպոգեն գործոնների ազդեցությունը» և «Մևանի լիմնոհամակարգի կառուցվածքաֆունկցիոնալ փոփոխությունների ուսումնասիրում և էկոլոգիական հավասարակշռությունը խախտող վճռորոշ գործոնների բացահայտում») թեմաներով ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 126400.2 /հարյուր քսանվեց միլիոն չորս հարյուր հազար երկու հարյուր / ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ՝ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 126400.2 /հարյուր քսանվեց միլիոն չորս հարյուր հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 116288.184 (հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր ութսունութ հազար հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի

նախագահություն

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Արարատ բանկ

ԲԲՀ/հ 1510005175820100

ՀՎՀՀ 00005673

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և

հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն

ք. Երևան, 0014, Պարույր Սևակի 7

Զարգացման Հայկական բանկ

Հ/հ 1810052020703313

ՀՎ ՀՀ 01008904

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

Տնօրեն՝ Բ. Գաբրիելյան



Հավելված 1ա
«27» 09 2015թ.
N 2-15 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Կենդանաբանության
ինստիտուտի

Թեմա 1. “Հայաստանի կենդանական աշխարհի ուսումնասիրություն՝ բազմազանությունը,
գնահատումը, պատմական զարգացումը, անթրոպոգեն գործոնների ազդեցությունը”
Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը

Աշխատանքի հիմնական նպատակն է վերլուծել և գնահատել հանրապետության կենդանական աշխարհի ներկա վիճակը, պարզաբանել նրա տեսակային և լանդշաֆտային բազմազանությունը, կարգաբանական, ձևաբանական, կենսաէկոլոգիական, պոպուլյացիոն, բջջագենետիկական, ֆիզիոլոգիական, ֆիլոգենետիկ զարգացման առանձնահատկությունները, վեր հանել խոցելի (հազվագյուտ ու անհետացող), մարդու առողջությանը և տնտեսությանը սպառնացող, ինչպես նաև տնտեսական արժեք ներկայացնող տարրերը, մշակել գիտական հիմք՝ արդյունավետ, կայուն և անվտանգ բնօգտագործման ու բնապահպանության համար:

Նախատեսված հետազոտությունները լիովին համապատասխանում են ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Կենդանաբանության ինստիտուտի կանոնադրություններով ամրագրված գործունեության առաջնահերթ ուղղություններին:

Ըստ 2011-2015թթ. համար ներկայացված և հաստատված հայտի՝ 2015 թ. նախատեսված է իրականացնել

- լրացուցիչ հետազոտություններ 2011-2014թթ. տվյալները համալրելու նպատակով,
- կոլեկցիոն ֆոնդերում պահպանվող նյութերի ուսումնասիրություն,
- ստացված նյութերի համեմատական վերլուծություն, ամփոփում,
- առաջարկությունների մշակում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում)

Նախատեսվող աշխատանքներում կներգրավվի ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտի գիտական և օժանդակող աշխատակազմը, հայցորդներն ու ասպիրանտները: Աշխատանքները կատարվելու են համապատասխան 2015թ. հայտում նախանշված խնդիրների և օրացուցային պլանի: Կօգտագործվեն կենդանաբանական, մակարոծաբանական, ֆիզիոլոգիական, բջջագենետիկական, էկոլոգիական ավանդական մեթոդները, հասանելի ժամանակակից մշակումներն ու մոտեցումները: Կիրականացվեն դաշտային, լաբորատոր և փորձարարական հետազոտություններ՝ համապատասխան դրված խնդիրների: Հավաքված

նյութը կմշակվի և կֆիքսվի՝ ինստիտուտի կոլեկցիոն ֆոնդերում հետագա պահպանման նպատակով: Տվյալների համեմատական վերլուծության համար կօգտագործվեն նախկինում ձեռք բերված և կոլեկցիոն ֆոնդերում եղած նյութերը, ինչպես նաև գրական տվյալները: Արդյունքները կամփոփվեն համապատասխան ցուցակների, աղյուսակների, գծանկարների տեսքով: Իրականացրած գիտական հետազոտությունների նյութերը կքննարկվեն համապատասխան լաբորատորիաների, Կենդանաբանության ինստիտուտի և ԿՀԷԳ կենտրոնի գիտխորհրդների նիստերում, կներկայացվեն հրատարակման՝ հանրապետական և միջազգային գիտաժողովներին և ամսագրերին: Աշխատանքներն իրականացվելու են Կենդանաբանության ինստիտուտի նյութատեխնիկական բազայի հիման վրա, հնարավորության դեպքում կօգտագործվեն նաև հանրապետական և միջազգային համագործակցության շրջանակներում ընձեռած հնարավորությունները: Նախատեսված աշխատանքների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են.

- պայմաններ գիտարշավներ իրականացնելու համար:
- փորձարարական կենդանիներ, ռեակտիվներ, այլ նյութեր և պարագաներ
- համապատասխան հատկացումներ գործուղումների համար՝ գիտնականների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին, ստաժավորման և արտասահմանյան գործընկերների հետ համատեղ աշխատանքներ իրականացնելու համար
- գիտաժողովներ կազմակերպելու, արտասահմանյան գիտնականներին հրավիրելու հնարավորություն՝ միջազգային հանրությանը հանրապետության գիտական նվաճումներին ծանոթացնելու համար: Այս տարի նախատեսված է անցկացնել միջազգային մասնակցությամբ գիտաժողով՝ “Կենսաբազմազանություն և կենսառեսուրսներ”:
- ֆինանսական միջոցներ ենթակառուցվածքը պահպանելու համար, այդ թվում.
 - կապիտալ և ընթացիկ նորոգման
 - գիտական կոլեկցիոն ֆոնդերի
 - ՌԳԱ հետ Համատեղ Գիտափորձարարական Կենտրոնի /ՀԳՓԿ/
 - գրադարանի լիարժեք և արդյունավետ գործունեությունն ապահովելու համար:

4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

Վերջին տասնամյակում հանրապետությունում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական արմատական վերափոխումները, կենդանական աշխարհի ինտենսիվ և չկարգավորված օգտագործումը, շրջակա միջավայրի վատթարացումը, տարբեր ճանապարհներով և պատճառներով ֆաունայում նոր տեսակների հայտնվելը անդրադարձել են կենդանական աշխարհի ինչպես առանձին բաղադրիչների, այնպես էլ էկոհամակարգերի և ամբողջական ֆաունայի վիճակի վրա, առաջացնելով բազմաթիվ խնդիրներ: Հանրապետության բնաշխարհի պահպանումը, կենսառեսուրսների շարունակական և արդյունավետ օգտագործումն ապահովելու, ինչպես նաև մարդու առողջությանը, գյուղատնտեսական կենդանիներին և բույսերին վտանգ ներկայացնող տեսակների և այլ ազդեցությունների վնասի կանխման համար անհրաժեշտ են համապատասխան գիտական ուսումնասիրություններ, որոնք լիովին համապատասխանում են ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Կենդանաբանության ինստիտուտի կանոնադրություններով ամրագրված գործունեության առաջնահերթ ուղղություններին:

Իրականացվող ծրագիրն ունի շարունակական երկարաժամկետ բնույթ և ենթադրում է լայնածավալ ուսումնասիրությունների իրականացում հանրապետության ողջ տարածքում: 2011-2015թթ. հայտով ուսումնասիրությունների համար ընտրված էին հանրապետության հետևյալ մարզերն ու շրջանները՝

Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի: 2011թ. առանձին խմբերի ուսումնասիրություն կատարվել է նաև Սևանի ավազանի շրջաններում, Երևան քաղաքում և շրջակայքում:

2015թ. հետազոտական փուլը 2011-2015թթ. ծրագրի իրականացման ավարտական փուլն է: Նախատեսված է իրականացնել լրացուցիչ տվյալների ձեռքբերմանը և համալրմանը ուղղված հետազոտություններ, կոլեկցիոն ֆոնդերում պահպանվող նյութերի ուսումնասիրություն, ինչպես նաև նախկինում ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծություն ու ամփոփում, անհրաժեշտության դեպքում նաև առանձին տեսակների տաքսոնոմիական վիճակի վերանայում (ռեվիզիա): Կստեղծվեն տվյալների համակարգչային բանկեր: Կմշակվեն բնապահպանական և գործնական առաջարկություններ:

2015թ. նախատեսվող հետազոտությունները կիրականացվեն 1.01.2015-31.12.2015թթ. ժամանակահատվածում և կծավալվեն հետևյալ խնդիրների շուրջ.

1. Ողնաշարավոր և անողնաշար կենդանիների ֆաունայի ներկա վիճակի ուսումնասիրում, անթրոպոգեն գործոնի գնահատում

1.1. Ողնաշարավոր կենդանիների ֆաունայի ներկա վիճակի ուսումնասիրում, անթրոպոգեն գործոնի գնահատում

Ողնաշարավորների ֆաունայի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ ձեռք բերելու նպատակով նախատեսվում է շարունակել հետազոտությունները Արարատյան հարթավայրի կիսաանապատային գոտուց մինչև Արագածոտնի և Կոտայքի մարզերի լեռնատափաստանային գոտիները:

Հետազոտությունների ողջ ընթացքում հավաքված նյութերի հիման վրա կիրականացվի համեմատական վերլուծություն՝ տարբեր լանդշաֆտային գոտիներին բնորոշ ողնաշարավորների ժամանակակից ֆաունայի վերաբերյալ իրական պատկեր ստանալու նպատակով: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի Հայաստանի Կենդանիների Կարմիր գրքում (2010) գրանցված տեսակներին: Կկատարվի ուսումնասիրված տարածքների ողնաշարավոր կենդանիների ֆաունայի ներկա վիճակի գնահատում: Կմշակվեն և կներկայացվեն համալիր բնապահպանական առաջարկություններ:

Կշարունակվեն հնագիտական նյութերի ուսումնասիրությունները: Կկատարվի Առատաշենի հուշարձանից և Արարատյան դաշտավայրից բերված նույն ժամանակաշրջանին թվագրվող ոսկրաբանական նյութերի համեմատական վերլուծություն և ամփոփում: Կշարունակվեն ոսկրաբանական կոլեկցիոն ֆոնդի համալրումը և տվյալների համակարգչային բազայի ստեղծման աշխատանքները:

1.2. Մինանթրոպ կաթնասունների տեսակային կազմը, կենսաբանությունը և նշանակությունը

Մարդու տնտեսական գործունեությունը հաճախ հանգեցնում է կենդանիների բնական տարածքների վերացմանը, ինչի պատճառով նրանցից շատերը՝ կորցնելով իրենց բնակատեղերը, տեղափոխվում են մարդաբնակ վայրեր (տներ, գոմեր, բանջարանոցներ, մառաններ, ջերմոցներ, այգիներ և այլն): 2015թ. նախատեսվում է.

- լրացուցիչ տվյալների ձեռքբերման նպատակով դաշտային հետազոտությունների իրականացում Արարատյան հարթավայրի, Արագածոտնի, Կոտայքի և այլն մարզերի առանձին տեղամասերում
- հանրապետությունում առկա կոլեկցիոն նյութերի (ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի, ԵՊՀ, Հայ-Սլավոնական համալսարանի, Հայկական ագրարային համալսարանի) մշակում
- բոլոր ուսումնասիրված նյութերի և տվյալների համեմատական վերլուծություն և ամփոփում:

- սինանթրոպ ողնաշարավոր կենդանատեսակների արդի վիճակի բնութագրում, ցուցակների կազմում, առաջարկների մշակում:

1.3. Անողնաշար կենդանիների ֆաունայի ներկա վիճակի ուսումնասիրում, անթրոպոգեն գործոնի գնահատում

Կիրականացվեն հետազոտություններ նախկինում ստացված նյութերի և տվյալների համալրման ուղղությամբ, կմշակվեն կոլեկցիոն նյութերը: Անողնաշար կենդանիների առավել խոշոր կարգաբանական խմբերի ֆաունայի ուսումնասիրության արդյունքում կճշտվի նրանց տեսակային կազմը, տարածվածությունը, թվաքանակը: Կկատարվի բոլոր տվյալների համեմատական վերլուծություն: Կվերանայվի որոշ տեսակների կարգաբանությունը: Կգնահատվի անողնաշար կենդանիների ֆաունայի արդի վիճակը և առանձին տարրերի վրա անթրոպոգեն գործոնների ազդեցությունը: Կճշտվի պահպանության կարիք ունեցող տեսակների կարգավիճակը՝ ինչպես առկա ՀՀ Կարմիր գրքում գրանցված, այնպես էլ հազվագյուտ և նեղ տարածվածություն ունեցող այլ տեսակների՝ հետազայում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված Կարմիր գրքի վերահրատարակման աշխատանքներն իրականացնելու համար: Կվերհանվեն նաև լայն տարածված, մարդու համար օգտակար և վնասակար տեսակները, կտրվի նրանց կենսաէկոլոգիական բնութագիրը:

Կիրականացվեն վնասատուների դեմ պայքարի կենսաբանական մեթոդի համար միջատների և գիշատիչ տզերի հեռանկարային տեսակների հայտնաբերմանը և դրանց ընտրելու սկզբունքների մշակմանը ուղղված աշխատանքներ: Կգնահատվեն կենսաբանական պայքարում հայտնաբերված գիշատիչների (միջատներ և տզեր) օգտագործման հեռանկարներն ու հնարավորությունները:

2. Գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի համար ռիսկի գործոն հանդիսացող մակաբույծների և վնասատուների ուսումնասիրություն

2.1. Կենդանիների մակաբուծային հիվանդությունների համաճարակաբանական կարևորագույն ասպեկտների /տարածվածության, վարակվածության էքստենսիվության և ինտենսիվության/ ուսումնասիրություն

Հետազոտությունների հիմնական նպատակն է ճշտել ընտանի և վայրի կենդանիների վարակվածությունը էկտո- և էնդոմակաբույծներով, ինչպես նաև որոշ բիոհելմինթների միջանկյալ տերերի վարակվածությունը դրանց թրթուրային ձևերով:

Արագածոտնի մարզում և Արարատյան դաշտավայրում կիրականացվեն աշխատանքներ՝ ուղղված մանր եղջերավոր անասունների թոքային հելմինթներով վարակվածության և պրոտոստրոնգիլիդոզների դեմ բուժ-պրոֆիլակտիկ միջոցառումների մշակման ուղղությամբ: Կբացահայտվի մանր եղջերավոր անասունների վարակվածությունը առավել տարածված հելմինթներով: Կգնահատվի լայն սպեկտրի որոշ անտիելմինթիկների թերապեվտիկ արդյունավետությունը ոչխարների և այծերի թոքային ստրոնգիլատոզների (մյուլերիոզ, ցիստոկաուլյոզ, պրոտոստրոնգիլիդոզ) ժամանակ:

2011-2015թթ. ընթացքում ձեռք բերված տվյալների վերլուծության և ամփոփման արդյունքում կպարզաբանվի կենդանիների մի շարք մակաբույծների տարածվածությունը և համաճարակաբանական կարևորագույն ասպեկտները, ինչպես նաև որոշ բիոհելմինթների շրջանառության ուղիները հանրապետության արոտային ցենոզներում:

2.2 . Արմավիրի մարզի փակ և բաց գրունտի գյուղատնտեսական մշակաբույսերի մակարոյծ (զալային, ցիստառաջացնող և ցողունային) նեմատոդների հետազոտություն

Վերջին տարիների հետազոտությունները Արարատյան հարթավայրի տնտեսություններում, ինչպես նաև որոշ նախալեռնային շրջաններում (Արագածոտնի մարզ) ցույց տվեցին, որ բանջարանոցային մշակաբույսերը, պտղատու և դեկորատիվ ծառատեսակները, խաղողը վարակված են այնպիսի մակարոյծ ֆիտոնեմատոդներով (զալային, ցողունային և վիրուսակիր), որոնք բացի անմիջական վնասից ճանապարհ են բացում այլ պաթոգենների՝ վիրուսների, սնկերի, բակտերիաների ներթափանցման համար: Ուստի առաջացել է լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն՝ խիստ վնասակար տեսակների կենսակոլոգիական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով:

Վկատարվի նաև հավաքածու նյութերի՝ ազատ ապրող նեմատոդների, վարակված բույսերի տարբեր օրգանների, մշտական պրեպարատների ուսումնասիրություն:

Վերլուծության ենթարկված բոլոր նյութերի (ձեռք բերված, գրական, կոլեկցիոն) ամփոփ արդյունքները թույլ կտան ճշտել ֆիտոնեմատոդների տեսակային կազմը, գնահատել նեմատոլոգիական իրավիճակը հանրապետության ուսումնասիրված շրջաններում, բացահայտել խիստ վնասակար նեմատոդների տարածվածության օջախները: Կմշակվեն գիտականորեն հիմնավորված պրոֆիլակտիկ միջոցառումներ և պայքարի առաջարկություններ՝ ֆիտոնեմատոդների հասցրած վնասը նվազեցնելու համար:

3. Կենդանիների վարքի առանձնահատկությունների գնահատման նոր փորձարարական մոտեցումների և արդյունավետ գործիքային մեթոդների մշակում և փորձարկում

Կշարունակվեն սթրեսային իրավիճակներում կենդանիների վարքագծի տեսակային և ներտեսակային առանձնահատկությունների հետազոտություններ:

Որպես վարքագծի փորձարարական մոդել կկիրառվի հետազոտող խմբի կողմից նախորդ տարիներին մշակված համակարգչային վիդեոտրեկինգի համակարգը: Հետազոտությունները կիրականացվեն լաբորատոր կենդանիների՝ սպիտակ առնետների և մկների վրա:

Նախատեսվում է բացահայտել և ուսումնասիրել սեռական դիմորֆիզմի վարքային դրսևորումների տարբերությունները սթրեսային վիճակի պայմաններում:

Հետազոտությունների արդյունքները թույլ կտան ստեղծել կենդանու հոգեբանա-էմոցիոնալ ստատուսը հաշվի առնող հետազոտական վարքաքծի մեդանիզմի մոդել:

4. Ծանր մետաղների ազդեցությունը բնական և փորձարարական պայմաններում անողնաշար և ողնաշարավոր կենդանիների բջջազենետիկական, անատոմա-ձևաբանական և կենսաբանական այլ ցուցանիշների վրա

Հայաստանում էկոլոգիական վիճակի վատթարացման պատճառներից է ծանր մետաղներով ջրային և հողային բիոտոպների աղտոտումը: Նախատեսվում է լրացուցիչ տվյալներ ստանալու համար ուսումնասիրել մոլիբդենի (Mo) իոնների տարբեր կոնցենտրացիաների ազդեցությունը լճագորտի (*Pelophylax ridibundus*) և կանաչ դողոջի (*Bufovariabilis*) կենսաբանական և բջջազենետիկական որոշ ցուցանիշների վրա բնական (Հրազդան գետի Երևանյան հատված) և փորձարարական պայմաններում:

Կկատարվի ստացված տվյալների համեմատական վերլուցություն, կտրվեն առաջարկություններ՝ էկոհամակարգերի բիոմոնիթորինգային աշխատանք ներ իրականացնելու նպատակով:

5. Աուտբրեդային և ինբրիդային տրամախաչման արդյունքում ստացված հիբրիդային կենդանիների առանձնահատկությունների ուսումնասիրում

ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտի Հայ-Ռուսական Համատեղ Գիտափորձարարական Կենտրոնում հայկական մուֆլոնի և ընտանի ոչխարի տրամախաչումից ստացված խառնածին կենդանիներ “ինքն իր մեջ” բուծվում են 20-ից ավելի տարիներ, և գլխականաքի ոչ մեծ լինելու հետեւանքով բազմացումը ընթանում է նեղ ազգակցական բուծման եղանակով: Ուստի անհրաժեշտություն է առաջացել պարզաբանել ինբրիդինգի ազդեցությունը կենդանիների որոշ կենսաբանա-կենսաքիմիական հատկանիշների վրա: Կուսումնասիրվի հայկական մուֆլոնի և ընտանի ոչխարի հիբրիդների երկարամյա “ինքն իր մեջ” բուծման արդյունքում ստացված խառնածին գառների ֆենոտիպային փոփոխությունների դինամիկան: Ստացված արդյունքները կենթարկվեն համեմատական վերլուծության: Կմշակվեն առաջարկություններ՝ ոչխարի մսի որակական և քանակական հատկանիշների բարելավման ուղղությամբ:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը
Իրականացված գիտական աշխատանքների արդյունքները կներկայացվեն հաշվետվությունների և հրապարակումների, ինչպես նաև գիտաժողովներում և այլ գիտական միջոցառումներում զեկույցների ձևով:

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի
տնօրեն՝


(ստորագրություն)

Կ.Պ.Դիլբարյան

Հավելված 2ա
 «ՏԲ» ՕԲ
 2015 թ.
 N 2-15 պայմանագրի

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի

ՀՀ ՊԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Կենդանաբանության ինստիտուտ
 Թեմա՝ «Հայաստանի կենդանական աշխարհի ուսումնասիրություն՝ բազմազանությունը, գնահատումը, պատմական զարգացումը, անթրոպոգեն
 գործոնների ազդեցությունը»

NN Ը/Կ	Իրականացվելիք միջոցառումներ			վերջնաժամ կետը	պահանջվո ղ գումարը (հազար դրամ)	
	Անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը			ակնկալվող արդյունքները և ղրանց գնահատման չափանիշները
2015թ. 1-ին Եռամս յակ	1. Գիտաան հետազոտու- թյունների իրականացու մ:	1. Լաբորատոր և դաշտային աշխատանքներ: 1. Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում:	Կկատարվի առաջնանյութի հավաք և սկզբնական մշակում /ըստ ուսումնասիրվող կարգաբանական խմբերի և դրված խնդիրների/: 1. Կկիրառվեն կենդանաբանական, միջատաբանական, մակաբուծաբանական ավանդական և ժամանակակից մեթոդներ:	Առաջնանյութի առկայություն. -չոր նյութերի -թաց նյութերի -դաշտային մատյանների -լուսանկարների -փորձերի գրանցման մատյաններ:	31.03.2015թ.	15808.1
		2. Փորձարարական աշխատանքների իրականացում:	2. Կկիրառվեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ. -Ֆիզիոլոգիական, այդ թվում «Բիոսկոպ» ապարատուրայի միջոցով հեռահար /անշփում/ ազդանշանների			

			<p>գրանցմամբ: -Բջջագենետիկական -Համակարգչային և այլն:</p> <p>Գրական նյութերի մշակում:</p> <p>Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված խնդիրների: Հավթածուների վնասագերծում՝ սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում:</p>	Գրականության քարտադրանքի առկայություն: Կոլեկցիոն նյութերի առկայություն	
